

17533

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՅԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 11 ԱՊՐԻԼ 1879ԻՆ

ՎԵՐԱՔՆՆՈՒԱԾ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1908ԻՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1908

37(=91.99)

Ա-23

37(=91.99)

Ա-23

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՆՈՒԷՐ ԶԱՅՈՒՅԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 11 ԱՊՐԻԼ 1879ԻՆ

ՎԵՐԱՔՆՆՈՒԱԾ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1908ԻՆ



2001

2010

Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՎ ԾԱՏԹ՛ՆՈՍԵԱՆ  
1908

42423-4-3

259

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՆՈՒԼԻՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հաստատում 11 Ապրիլ, 1879ին

Վերաբնուում 4 Հոկտեմբեր, 1908ին

Ն Պ Ա Տ Ա Կ

Դաւաւներու մէջ հայ իգական սեռի դաստիարակութեան նպատակ

Ը Ն Կ Ե Ր Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Յօդում 1. — Ընկերութեանս կրնայ բաժանորդ գրուիլ ամէն անհատ երկու սեռէ, վճարելով մէկ զրուշ ամսական իբրև բաժնեզին:

Յօդ. 2. — Ընկերութեանս պատուոյ անդամ կը նկատուին բոլոր այն բաժանորդները որոնք ամիսը գոնէ 50 զրուշ կը վճարեն:

Յօդ. 3. — Ընկերութեանս բարերար կը նկատուին անոնք որոնք գոնէ 100 ոսկի կը նուիրեն կամ կը կտակեն:

Յօդ. 4. — Ընկերութիւնս մասնաճիւղեր կամ ներկայացուցիչներ կրնայ ունենալ ամենուրեք:



26029-61

2 0 2 0 2

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Յ Ի Ւ Ն

Յօդ. 5. — Ընկերութիւնս պաշտօնական երկու մարմին ունի: Ընդհանուր ժողով և Գործադիր ժողով:

Ը Ն Դ Շ Ա Ն Ո Ւ Ի Ժ Ո Ղ Ո Վ

Յօդ. 6. — Ընդհանուր ժողովը կը ներկայացնէ Ընկերութիւնը որուն օրէնսդիր և համարառու մարմինն է:

Յօդ. 7. — Ընդհանուր ժողովը կը բաղկանայ առ նուազն 30 ընկերուհիներէ:

Յօդ. 8. — Ընդհանուր ժողովը նոր ընկերուհիներ կ'ընտրէ հրաժարած ընկերուհիներու անդ:

Յօդ. 9. — Ընդհանուր ժողովը 3 ամիսը անգամ մը նիստ կ'ընէ, բայց եթէ հարկ ըլլայ արտաքոյ կարգի նիստ կրնայ գումարել, երբ Գործադիր ժողովը կամ 10 ընկերուհիներ գրաւոր առաջարկութիւն ընեն:

Յօդ. 10. — Իգական սեռէ ամէն բաժանորդ կրնայ Ընդհ. ժողովի նիստերուն ներք-

ներկայ դանուիլ իբր ունկնդիր, առանց ժողովին մէջ ձայն կամ քուէ ունենալու:

Յօդ. 11. — Ընդհանուր ժողովը կրնայ հրաժարեցնել այն ընկերուհիները որոնք Ընկերութեանս շահերուն և օրէնքին հակառակ գործելու պիտի քննուին:

Յօդ. 12. — Ընդհանուր ժողովը կ'ընտրէ իր դիւանը որ կը բաղկանայ մէկ ատենապետէ և մէկ դեր-ատենապետէ, մէկ ատենագլխիէ և մէկ դեր-ատենագլխիէ որոնց պաշտօնը երկամսայ է, և որոնք վերընտրելի կրնան ըլլալ:

Գ Ո Ր Ծ Ա Գ Ի Ի Ժ Ո Ղ Ո Վ

Յօդ. 13. — Գործադիր ժողովը Ընկերութեան ընթացիկ գործերը կարգադրող և Ընդհ. ժողովի որոշումները գործադրող մարմինն է:

Յօդ. 14. — Գործադիր ժողովը կ'ընտրուի Ընդհ. ժողովին մէջէն և կը բաղկանայ ութը անձերէ. ատենապետ և դեր-ատենապետ, ատենագլխի և դեր-ատենագլխի, գանձապետ, համարակալ և երկու խորհրդական:

Յօդ. 15. — Գործադիր ժողովի պաշտօնը երկամեայ է, և ընկերները վերընտրելի են :

Յօդ. 16. — Գործադիր ժողովը կը ներկայացնէ Ընդհ. ժողովի ամէն կանոնական նիստերուն՝ իր հաշուեցոյցը և յաջորդ եռամսեայ ելեմտացոյցը, նաև տարին անգամ մը՝ իր գործառնութեանց համարատուութեան տեղեկագիրը :

Յօդ. 17. — Իր վարժարաններուն յայտագիրը կը պատրաստէ և Ընդհ. ժողովին վաւերացման կ'ենթարկէ :

Յօդ. 18. — Գործադիր ժողովը ստիպողական պարագաներու մէջ կրնայ ազատօրէն գործել, Ընդհ. ժողովին յառաջիկայ նիստին մէջ դրաւոր բացատրութիւն տալու պայմանաւ :

#### Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Յ Ի Ի Ն Ն Ե Ր

Յօդ. 19. — Ընկերութիւնս կ'ընդունի ամէն տեսակ նուէրներ, և նուիրատուներու անունները կը հրատարակուին լրագրիներու մէջ :

Յօդ. 20. — Ընկերութիւնս վարժուհիներ կը զրկէ, իր ծախքովը, Հայաստանի և Կիլիկիոյ հայ վարժարաններուն. և եթէ հարկ ըլլայ, հոն գանձուած դպրոցներուն կ'օժանդակէ մասնաւոր պայմաններով :

Յօդ. 21. — Ամէն տարեկան չըջանի վերջը, Ընդհ. ժողովը հինգ անձերէ բաղկացած յանձնաժողով մը կ'ընտրէ, Գործադիր ժողովին հաշիւներն ու անտուկին վիճակը, ինչպէս նաև ելեմտացոյցը ճշդիւ գործադրուած ըլլալը քննելու համար :

#### Գ Ա Ն Ձ Ա Յ Ի Ն Դ Ր Ո Ւ Յ Ի Ն

Յօդ. 22. — Գործադիր ժողովը ընկերութեանս դրամը ապահով դրամատուններու մէջ կը դնէ շահեցնելու համար :

Յօդ. 23. — Երբ գանձապետը 10 ոսկիէ աւելի դրամ ունենայ քովը, կը յանձնէ զայն դրամապահին :

Յօդ. 24. — Ընկերութիւնս չորս կտորէ բաղկացեալ կնիք մը ունենալով, մէկ մասը Ընդհ. ժողովի ատենապետին՝ մէկ մասը

Գործադիր ժողովի ատենապետին՝ և միւսը՝  
գանձապետին մէկն ալ համարակալին քով  
պէտք է մնայ, և դրամապահէն առնուելիք  
դրամներուն համար այս չորս կտորներուն  
միացումը կարեւոր է:



**ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

Յօդ. 25. — Ընկերութիւնս ներքին կա-  
կոնադիր մը ունի, որուն մէջ գծուած են ներ-  
կայ կանոնադրին գործադրութեան եղանակին  
վերաբերեալ արամադրութիւններ:

**ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ**

Յօդ. 26. — Ընկերութեանս նպատակը  
անփոփոխ պահելով, այս կանոնադիրը կրնայ  
վերաքննուիլ, եթէ հարկ տեսնուի:

Յօդ. 27. — Եթէ որ և է անակնկալ  
պատճառաւ ընկերութիւնս շարունակուելու  
անկարելիութեան մէջ գտնուի, անոր դոյքը  
իգական սեռի դատարարակութեան կը յատ-  
կանայ:



24

W →

